զբարեկենդանն ի կիրակէի աւուրն առնէի, բայց մինչ տեսի, զի այնպիսաբար վարիլս զոչ ինն բարութիւն առբերէ՝ հաւատոյս կամ անուանս, այլ միայն կայթակղութիւն, վասն այսորիկ ես ևս այժմ ըստ լաթինացւոց առնեմ զպասն և զուտիսն:... զսրբազնութեան դնելոյ կերպն ուսցի, և ոչ միայն զերեկոյեանն, այլ և զառաւօտեանն, զի զսոյն կերպն Հ. Անդօնն լաւ գիտէ, զի լէհացւոց հայքն ըստ մեծի մասին այսպէս առնեն....: Պարոն ճանազիզին գիր եկն ի Թօխադու, և ի նմին Թղթոջ ծանուցանէն՝ թէ ի յէրզրումայ ի Թօխադ ոչ կարէ քէվրանն գալ. նաև ոչ իսկ ի Թօխաթու կարէ գնալ յէրզրում, և մանաւանդ ի յէրզրումայ ի յաճէմստան, զի բաց իրէվանա՝ վերստին տիրեալ է զըլպաշն այնց զաւառաց, որ օսմանցին տիրապետեալ էր նախապէս, և այլն: Նաև յայս շաբաթ իլօվցի հայ մի եկն աստ, և նա ըստ որում պատմէ, լէհացիք այժմ ըն մեծի վշտի կան, մօսկօֆն ասէ՝ հարիւր հազար զինւորօք նստեալ է ի լէհէստան, ճէնտալխիմօն բազմօք զօրովք նստեալ է ի յիլով քաղաքն, և քաղաքացիքն վասն ծախից սեղանոյ նորին յաւուրս ձ Թալէր վճարեն բաց ի պահարեղինաց և չէքէրիցն, զի այսպիսեաց ծախքն հրէայքն հոգան, և խիստ հակառակ է հրէից ազգն մօսկօֆաց: Ի գաւառն ռէնիու ֆլիպուռքին Ջուրն սոքա կտրեցին, և զմասն ինչ ի զօրացն կայսերական անդէն եղին, զմասն ինչ ևս հանդէպ զօրու ֆրանսըզին, իսկ և զմնացեալ հեծելազօրսն հանդերձ զատանայիւք գնալոց են ի հողն ֆրանսըզու[1]. և զայս այսպէս գիտելով, ընդդէմ նորա այսքան զինւոր ևս միշտ ի պատրաստի կայ: փօրթուքալու թագաւորն ԾԱ. զինւորս յղեալ է ի սպանիա, և այժմ կայսրն զմի ճէնռալ յղեաց առ նոսա: Ոմանք ասեն, թէ հաշտութիւն լինի, իսկ այլք զընդդէմն ասեն....:

Ի Պէլկրատ Գ Յունիս
1735

Պատրաստական ծառայ ամենայնի
Եղիա վարդապետ կոստանդնուպօլսեցի

ԿԱ.

Հ. Յակոբ Բուզայեան յաջորդելով Հ. Եղիայի՝ կը ստանձնէ հովուութեան պաշտօնը Պելկրատի Հայ ժողովուրդին՝ որ կը համակրի իրեն, ծանօթ ըլլալով մանաւանդ տեղական լեզուին. Թէև միւս կողմանէ հօտը կը դժուարի յոյժ նախորդէն զրկուելուն, մինչև իսկ փափագելով որ ինքն ալ քովերնին մնայ. — ահա ինչ որ ուրեմն կարդացած ենք Հ. Եղիայի մէկ ուրիշ նամակին մէջ:

Բուզայեան մին է Մխիթարայ այն աշակերտներէն՝ որոնք քաղաքական վերահաս աղէտին պատճառաւ՝ Մեթոնի Մենաստանին մէջ իբր պահապան մնացին, և ապա գերի բռնուելով Պոլիս տարուեցան ու փրկանքով միայն ազատեցան: Եւ որովհետև այժմ իր մասին է մեր խօսքը՝ յօգուտ իր կենսագրութեան կը դնենք շատ փոքրիկ տեղեկութիւն մ՚ալ, թէ յիշեալ վարդապետը Մխիթարայ Միաբանութեան կը նուիրուի՝ տնէն փախչելով, ինչպէս ինքն իսկ կը յիշատակէ ազգականներուն, ըսելով ծնողաց մասին՝ թէ « տնէն փախչելոյս կսկիծն քաշեցին »: Աւելորդ չենք նկատեր յիշատակելու նաև Մխիթարայ մէկ հայրենի գորովալից բացատրութիւնը՝ զոր Հ. Յակոբ իբր համեմատական եզր մէջ կը բերէ այսպէս. «Մեր Գերյարգելի աբբայ « հայրն երբ որ գլխ պէլրդատ խրկեց, ասաց թէ քո կարօտդ կոմիտասէն և ստէ« փանէն կառնեմ. ուրեմն դու ալ ո՞վ սիրուհի, զիմ կարօտս սիմաէն և չէչիլիաէն « առնես, զի որպէս գիտես որ սիման քոյր իմ է և հօր քուր քո, իսկ չէչիլեան « դուստր եղբօրս է և քոյր քո (Գր. 1735 Պելրդատ. Դեկտ. 2):

---

1. Կը հետևի հոս տող մը ծածկագրութիւն: